«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների իրավունքների ու ազատությունների , պատվի ու արժանապատվության պաշտպանությունը.

Դաստիարակ՝ Հովհաննիսյան Շուշան

Մանկապարտեզ՝ « N50 մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2-3

ԳԼՈՒԽ 1

Երեխաների պաշտպանության օրենք.....4

ԵՐԵԽԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ.....5-10

ԳԼՈՒԽ 2

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ.....11-3

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.....14-15

Գործնական մաս 17-22

Եզրակացություն 24

Գրականության ցանկ 25

Ներածություն

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերն ընկած են միջազգային իրավաբանության հիմքում: Այդ իրավաբանությունն հստակ է. երեխաները յուրաքանչյուր հասարակության եւ պետության ապագան են, ուստի պետք է գտնվեն հատուկ եւ մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու եւ մեծանալու երեխայի կարեւորագույն իրավունքը: Սա է, որ պետք է կազմի ժամանակակից յուրաքանչյուր պետության գործունեության առաջնահերթ առարկան:Երեխաներն իրենց տարիքային, մտավոր եւ ֆիզիկական զարգացվածության առանձնահատկություններով համարվում են հատուկ խումբ եւ ունեն մշտական հոգածության ու պաշտպանության կարիք: Իրականում, երեխաների պաշտպանվածության մակարդակը տարբերվում է երկրից երկիր, իսկ աշխարհի տարբեր մասերում ապրող երեխաները կա'մ լիարժեք պաշտպանված են իրենց բոլոր իրավունքների առումով, կա'մ էլ անգամ կյանքի իրավունքի առումով չունեն պաշտպանվածություն:Հատկապես անցումային հասարակություններում երեխաները մշտապես կրում են տնտեսական անկայունության եւ փոփոխվող սոցիալական միջավայրի բացասական ազդեցությունը, որի հետեւանքով ամբողջ սերունդ կարող է հայտնվել ճգնաժամային իրավիճակում: Մինչդեռ, երեխաները յուրաքանչյուր հասարակության եւ պետության ապագան են, իսկ երեխաների պաշտպանվածության բարձր մակարդակը վկայում է տվյալ հասարակության կամ պետության զարգացվածության եւ արժանապատվության, ինչպես նաեւ քաղաքակիրթ եւ կայուն լինելու մասին: Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ջանքերը ենթադրում են պետական եւ հասարակական մասնագիտացված կազմակերպությունների, ինչպես նաեւ առանձին փորձագետների հետ համագործակցված եւ դրանով պայմանավորված՝ արդյունավետ աշխատանք: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն այս իմաստով իրականացնում է մշտական եւ համալիր գործունեություն՝ ուղղված հասարակության խմբերի իրավունքների պաշտպանությանը՝ համագործակցելով այդ բնագավառում գործող միջազգային եւ տեղական կառույցների հետ, մշակելով եւ կիրառելով տարբեր սոցիալական խմբերի ներկայացոցիչների կարիքներից բխող հասցեական աջակցության մեթոդաբանություն: Երեխայի իրավունքների պաշտպանությունը կազմում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքը: Այս փաստը արձանագրում ստացավ նաեւ սահմանադրական օրենքի մակարդակով: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաեւ երեխաների իրավունքների պաշտպանություն եւ վերջիններիս խախտումների կանխարգելում»: Սա կարեւորագույն նշանակություն ունեցող կարգավորում էր, որ զգալի փոփոխություն բերեց նաեւ Պաշտպանի գործունեության առաջնահերթությունների համակարգում:Այդ ուղղությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից

մշտապես իրականացվել է ինստիտուցիոնալ եւ գործընթացային քայլեր, որոնք միտված են ամրապնդելու երեխայի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ օրենսդրական հենքերի եւ համապատասխան կառույցների ամրապնդումը, երեխայի իրավունքների ապահովման գործիքարանի շտկումը եւ արդիականացումը, մասնագիտական ներուժի հասցեական կիրառումս ու համագործակցությունը բոլոր շահագրգիռ կողմերի հետ: ահագրգիռ կողմերի հետ:Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը ելնում է հայաստանյան հասարակության մեջ սերնդեսերունդ փոխանցվող՝ երեխաների հանդեպ հատուկ ուշադրության, սիրո եւ խնամքի ավանդույթներից, հայկական ընտանիքի՝ որպես արժեքի, պաշտպանության կարեւորությունից:Ելնելով վերոգրյալից, ինչպես նաեւ երեխաների լավագույն շահի հաշվառմամբ նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունից՝ Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: Բաժնի գործունեության կարեւորագույն ուղղություններից է հենց փակ հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը: Ուստի, այդ վայրերում գտնվող երեխաները պետք է անարգել հնարավորություն ունենան դիմելու եւ ստանալու Մարու իրավունքների պաշտպանի աջակցությունը իրենց իրավունքների պաշտպանության հարցում:

ԳԼՈՒԽ 1

Երեխաների պաշտպանության օրենք

Սույն օրենքը, հիմվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ « Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վրա, սահմանում է երեխայի իրավունքները, պետության եւ նրա համապատասխան մարմինների, ձեռնարկությունների, հիմարկների, կազմակերպությունների եւ քաղաքացիների պարտավորությունները՝ երեխայի իրավունքների պաշտպանության գործում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի գործողության շրջանակները

Հայաստանի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչեւ 18 տարեկան անձանց վրա:

Հոդված 2. Երեխայի իրավունքների մասին օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են երեխայի իրավունքները կարգավորող այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 3. Երեխայի իրավունքները պաշտպանող մարմինները

Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված համապատասխան պետական մարմինները:

Պետությունն իր համապատասխան մարմինների միջոցով համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող քաղաքացիների միավորումների, ոչ պետական կազմակերպությունների եւ առանձին անձանց հետ:

Հոդված 4. Երեխաների իրավահավասարությունը

Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց եւ ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից:

ԵՐԵԽԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 5. Երեխայի կյանքի իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք:
Պետությունը եւ նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու եւ զարգանալու համար:
Հոդված 6. Երեխայի անվան եւ քաղաքացիության իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան եւ քաղաքացիության իրավունք:
Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից:
Երեխան քաղաքացիություն է ձեռք բերում, նրա քաղաքացիությունը դադարում է « Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
Հոդված 7. Երեխայի առողջության պահպանման իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման եւ ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր:
Հոդված 8. Երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր եւ հոգեւոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք:
Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում է ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:
Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցադրում է համապատասխան օգնություն:
Հոդված 9. Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակ (ֆիզիկական, հոգեկան եւ այլ) բռնությունից պաշտպանության իրավունք:
Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:
Երեխայի իրավունքների եւ օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունը եւ նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առեւտրի մեջ ներգրավելուց, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից եւ նրա իրավունքների օրինական շահերի այլ ոտնահարումից:

Հոդված 10. Երեխայի մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի , խղճի եւ դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները , համոզմունքները եւ կարծիքը ենթակա են նրա տարիքին եւ հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Դավանանքի, ազատության եւ համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ մինչեւ 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Հոդված 11. Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի կրթություն ստանալու, իր , ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսեւորման, տաղանդի, մտավոր եւ ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական եւ մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ եւ այլն:

Պետական համապատասխան մարմինները մշակում եւ իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության եւ կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Յուրաքանչյուր երեխա ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Պետական համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի կրթության եւ մասնագիտական պատրաստության համար անհրաժեշտ տեղեկատվության եւ նյութերի տրամադրման մատչելիություն:

Հոդված 12. Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի ծնողներին ճանաչելու եւ նրանց հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ

ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից:
Պետությունը եւ նրա համապատասխան մարմինները նպաստում են ընտանիքի վերամիավորմանը:
Հոդված 13. Երեխայի իրավունքների պաշտպանությունն ընտանիքում
Երեխայի խնամքը եւ դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաեւ պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջապահության պահպանման, ընտանիքում եւ հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար:
Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը եւ դատիարակությունն ապահովելու նպատակով պետությունը եւ նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը:
Հոդված 14. Երեխայի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը ծնողների կողմից
Երեխայի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է:
Երեխայի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքում ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:
Հոդված 15. Ծնողների (ծնողի) հետ համատեղ չբնակվող երեխայի իրավունքը
Ծնողների (ծնողի) հետ համատեղ չբնակվող երեխան ունի նրանց (նրա) հետ անձնական կանոնավոր փոխհարաբերությունների եւ ուղղակի կապերի պահպանման իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության ամուսնության եւ ընտանիքի օրենսգրքով սահմանված դեպքերի:
Հոդված 16. Երեխայի բնակելի տարածության իրավունքը
Բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
Հոդված 17. Ժառանգություն ստանալու երեխայի իրավունքը
Յուրաքանչյուր երեխա (ներառյալ որդեգրված) ծնողի մահվան , ինչպես նաեւ դատարանի վճռով ծնողին մեռած հայտարարելու դեպքում անկախ բնակության վայրից, ունի ժառանգություն ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
Հոդված 18. Մշակութային արժեքներին հաղորդակցվելու երեխայի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգեւոր արժեքներին եւ համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք:
Յուրաքանչյուր երեխա ունի գեղարվեստական, գիտական եւ տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մասնակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսեւորելու իրավունք:
Երեխայի ստեղծագործական հնարավորությունների զարգացման նպատակով պետությունը խրախուսում է ֆիլմերի եւ տեսաֆիլմերի , հեռուստահաղորդումների թողարկումը, մանկական թերթերի, ամսագրերի, գրքերի հրապարակումը, ապահովում դրանց մատչելիությունը:
Բռնության եւ դաժանության պաշտամունքի, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, երեխայի վրա բացասական ազդեցություն ունեցող եւ իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության եւ գրականության տարածումը հետապնդվում է օրենքով:
Հոդված 19. Երեխայի աշխատանքի իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, առողջական վիճակին եւ ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:
Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին, բացառիկ դեպքերում՝ 15 տարին լրանալուց հետո:
Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
Արգելվում է երեխայի կողմից ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի վաճառքը, դրանց արտադրության եւ օգտագործման մեջ երեխայի ներգրավումը, ինչպես նաեւ այնպիսի աշխատանքի կատարումը, որը կարող է վնասել նրա առողջությանը, ֆիզիկական եւ մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն:
Հոդված 20. Երեխայի հանգստի իրավունքը
Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի եւ ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին եւ միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:
Պետական համապատասխան մարմինները խրախուսում են երեխայի հանգստի եւ ժամանցի կազմակերպումը՝ ստեղծելով արտադպրոցական, մանկապատանեկան, մշակութային, մարզական, հանգստի եւ առողջության ամրապնդմանն ուղղված հաստատություններ:
Երեխայի հանգստի կազմակերպման համար նախատեսված նյութատեխնիկական բազայի կրճատմանն ուղղված գործողությունները ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից համաձայնեցվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
Հոդված 21. Միավորումներին անդամակցելու երեխայի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիների միավորումներին, այդ թվում՝ հասարակական, մանկապատանեկան կազմակերպություններին անդամակցելու, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք:

Հոդված 22. Երեխայի պատվի եւ արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի եւ արժանապատվության պաշտպանության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության եւ հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի եւ արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստություններում երեխայի ուսուցումը եւ դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի եւ արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյու անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը եւ ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 23. Երեխայի անվտանգության ապահովումը

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է երեխայի անվտանգությունը: Երեխայի անօրինական տեղաշարժը (այդ թվում՝ այլ պետություններ), առեւանգումը, առուծախն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Խնամքից եւ ուշադրությունից զրկված երեխան չունի նորմալ աճի եւ առողջ զարգացման երկրորդ հնարավորություն, ուստի պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել բոլոր մակարդակներում երեխաների պաշտպանության խնդրին: Այս խնդիրը պայմանականորեն դիտարկվում է երկու ուղղությամբ՝ սոցիալ-իրավական եւ հոգեբանական-մանկավարժական:

• Սոցիալական եւ իրավական ուղղությունը ներառում է օրենսդրական աջակցություն երեխայի իրավունքների պաշտպանությունը, սոցիալական, կրթական, մշակութային եւ այլ մանկական հաստատությունների համակարգի ստեղծումը:

• Հոգեբանական եւ մանկավարժական ուղղությունը ենթադրում է բարենպաստ պայմանների ստեղծում՝ համապատասխան մթնոլորտ, ապրելակերպ, շփում ընտանիքում եւ ուսումնական հաստատությունում:

Այս դրույթին համապատասխան՝ երեխայի իրավունքների պաշտպանության միջազգային հանրությունը ընդունել է կարեւոր փաստաթղթեր, որոնք ուղղված են երեխայի իրավունքների պաշտպանությունն ամբողջ աշխարհում ապահովելու համար.

1924 թ – Ազգերի լիգայի շրջանակներում ընդունվեց երեխայի իրավունքների Ժնեւյան հռչակագիրը:
1948 թ - ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց մարդու իրավունքների հռչակագիրը, որը հայտարարեց, որ երեխաներն ունեն պաշտպանության եւ օգնության հատուկ իրավունք:
1959 թ Երեխայի իրավունքների հռչակագիր.
1989թ.՝Երեխայի իրավունքների կոնվենցիա.
1990թ.՝Երեխաների գոյատեւման, պաշտպանության եւ զարգացման համաշխարհային հռչակագիր: 1990 թվականին վավերացվել է կարեւորագույն միջազգային փաստաթուղթը՝ երեխայի
իրավունքների կոնվենցիան, որն առաջին անգամ երեխային դիտարկում է ոչ միայն որպես սոցիալական պաշտպանություն պահանող օբյեկտ, այլեւ որպես օրենքի սուբյեկտ: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան միջազգային բարձր մակարդակի եւ մանկավարժական մեծ նշանակություն ունեցող իրավական փաստաթուղթ է: Այն երեխային հռչակում է լիարժեք եւ լիարժեք անձնավորություն, իրավունքի անկախ սուբյեկտ եւ կոչ է անում մեծահասակի եւ երեխայի միջեւ հարաբերություններ կառուցել բարոյական եւ իրավական նորմերի վրա, որոնք հիմնված են իսկական
մարդասիրության, ժողովրդավարության, հարգանքի եւ հարգանքի վրա: Երեխայի իրավունքների իրականացումը ներառում է.
- պաշտպանել նրան բոլոր տեսակի վատ վերաբերմունքից,
- առողջության պահպանման իրավունք,
- կրթության իրիրավունքի պաշտպանությունը, - խաղի իրավունքներ
- իրենց անհատականությունը պահպանելու իրավունքը.
Նախադպրոցականների իրավական կրթության մեջ մանկավարժական գործընթացի նպատակը նախադպրոցական տարիքի երեխաների իրավագիտակցության հիմքերի ձեւավորումն է:

ԳԼՈՒԽ 2

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Հոդված 24. Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավունքների պաշտպանությունը

Առանց ծնողական խնամքի մնացած երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով:

Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի դաստիարակության հաջորդականության ապահովումը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն:

Երեխայի որդեգրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ելնելով երեխայի, նրա օրինական ներկայացուցիչների շահերից՝ պետությունը և նրա համապատասխան մարմինները երեխայի կենսապայմանների, առողջական վիճակի գնահատումը կատարում են գաղտնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Երեխան 16 տարին լրանալուց հետո ունի ինքնուրույն ապրելու իրավունք՝ բավարար կենսապայմանների, պետության և նրա համապատասխան մարմինների կողմից նյութական օգնության և որոշակի պայմանների ստեղծման դեպքում:

(24-րդ հոդվածը խմբ. 16.03.04 ՀՕ-56-Ն)

Հոդված 25. Երեխայի խնամքը և դաստիարակությունը մանկատներում

(1-ին մասն ուժը կորցրել է 16.03.04 ՀՕ-56-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը վերահսկողություն է իրականացնում մանկատներում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաներին տեղավորելու, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառման նկատմամբ: Մանկատներում երեխաների տեղավորման կարգը և նրանց խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծնողազուրկ երեխայի անձնական հաշվին փոխանցվում է կենսաթոշակ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգևոր ունակությունների լիարժեք զարգացման, նրան ինքնուրույն կյանքի նախապատրաստելու նպատակով մանկատներում, գիշերօթիկ հաստատություններում ստեղծվում են ընտանեկանին մոտ պայմաններ:

Մանկատանը գտնվող կամ տեղավորված և խնամակալի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալի պարտականությունները,

ինչպես նաև այդ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում է մանկատան ղեկավարը:

(25-րդ հոդվածը լրաց. 19.03.02 ՀՕ-316, փոփ. 16.03.04 ՀՕ-56-Ն)

Հոդված 26. Հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխայի իրավունքները

Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին: Նման երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում:

Պետությունը և նրա համապատասխան մարմինները նրանց համար ստեղծում են հատուկ մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ, իրականացնում են հաշմանդամ երեխաների բուժման հետևանքով նրանց թվաքանակը նվազեցնող սոցիալ-տնտեսական միջոցառումներ, կազմակերպում են հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական սարքերի արտադրությունը և դրանց ձեռքբերումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

(26-րդ հոդվածը լրաց. 19.03.02 ՀՕ-316)

Հոդված 27. Սոցիալական ապահովության երեխայի իրավունքը

Հաշմանդամ և կերակրողին կորցրած երեխան ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Երեխան ունի նպաստ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 28. Արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի իրավունքը

Արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ է ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու, ընտանիքի հետ վերամիավորելու, անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար:

Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանվածությունը՝ հոգալով նրա առաջնահերթ կարիքները:

Հոդված 29. Ռազմական գործողություններին երեխայի մասնակցության արգելումը

Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը:

Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին:

Զինված հակամարտությունների ժամանակ պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

Հոդված 30. Փախստական երեխայի իրավունքը

Ռազմական գործողությունների և այլ ընդհարումների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական երեխան ունի իր շահերի պաշտպանության իրավունք:

Պետությունը և նրա համապատասխան մարմինները միջոցներ են ձեռնարկում երեխայի ծնողների կամ հարազատների որոնման ուղղությամբ, ցուցաբերում են նյութական, բժշկական և այլ օգնություն, անհրաժեշտության դեպքում նրան տեղավորում են բուժկանխարգելիչ, գիշերօթիկ կամ այլ հաստատություններում:

Հոդված 31. Երեխայի իրավունքների պաշտպանությունը նրան պատասխանատվության ենթարկելիս

Երեխան ունի անձի անձեռնմխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով:

Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին:

Ազատազրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատազրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք:

(4-րդ մասն ուժը կորցրել է 05.11.03 ՀՕ-27-Ն)

Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահելը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է:

Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ:

Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:

(31-րդ հոդվածը փոփ. 05.11.03 ՀՕ-27-Ն)

Հոդված 32. Երեխայի իրավունքների պաշտպանությունը հատուկ դաստիարակչական կամ հոգեբուժական հաստատություններում

(Վերնագիրը խմբ. 23.05.11 ՀՕ-204-Ն)

Երեխային հատուկ դաստիարակչական հաստատություն է ուղարկում միայն դատարանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացմամբ:

Երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Հատուկ դաստիարակչական կամ բուժկանխարգելիչ կամ հոգեբուժական հաստատություններում գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության և մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների և այլ անձանց հետ տեսակցության և նամակագրության իրավունք:

Հատուկ դաստիարակչական հաստատության խնդիրն է երեխային ուղղելը և վերադաստիարակելը:

(32-րդ հոդվածը խմբ. 23.05.11 ՀՕ-204-Ն)

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 33. Երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագիրը

Երեխայի իրավունքների պաշտպանության աշխատանքներն իրականացվում են երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերով (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) սահմանված ժամկետներում և կարգով:

Տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ծախսերն արտացոլվում են համապատասխան տարվա պետական բյուջեի ծախսերում:

Տարեկան ծրագրի կատարման արդյունքով նախատեսված աշխատանքների թերակատարված մասը ներառվում է հաջորդ տարվա տարեկան ծրագրում:

Հոդված 34. Տարեկան ծրագրի բովանդակությունը և դրա մշակման սկզբունքները

Տարեկան ծրագիրը ներառում է՝

ա) ծրագրի հիմնական խնդիրները.

բ) նախատեսված աշխատանքների ծավալները և իրականացման ժամանակացույցը.

գ) նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համամասնությունները.

դ) ծրագրի կատարման սկզբունքները և նախատեսված աշխատանքների իրականացման առաջնահերթությունները.

ե) երեխայի իրավունքների պաշտպանության աշխատանքների իրականացման և դրանց ֆինանսավորման (այդ թվում՝ օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված օգնությունների հաշվին) գործընթացի վերահսկողության կարգը.

զ) առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու և նրա առողջության պահպանման միջոցառումները.

է) երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման չափորոշիչները, ուղղությունները և հեռանկարները.

ը) հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխաներին հասցեագրված աջակցություն ցուցաբերելու միջոցառումները, ուղղությունները, ծավալները և նախատեսվող արտոնությունները (այդ թվում՝ անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն,

հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական սարքերի,հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների և բոլոր տեսակի պրոթեզային իրերի անվճար տրամադրում և այլն, բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների).

թ) սոցիալական անապահով երեխաներին (այդ թվում՝ ծնողազուրկներ, չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներ և այլն) հատկացվող օգնության ծավալները և նրանց տրամադրվող արտոնությունները.

ժ) անօթևան կամ ծնողական խնամքից զրկված երեխաների խնամքը և դաստիարակությունը մանկատներում, գիշերօթիկ և ուղղիչ-աշխատանքային հաստատություններում կազմակերպելու ուղղությամբ նախատեսվող միջոցառումները.

ժա) նախատեսված աշխատանքները՝ ըստ լիազորված մարմինների.

ժբ) երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու նպատակով նախատեսվող միջոցառումները (ստացիոնար կամ բակային ճամբարներ և այլն).

ժգ) այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են ծրագրի համակողմանի ներկայացման համար:

Տարեկան ծրագրի հետ կառավարությունը ներկայացնում է նաև դրա կատարումն ապահովող օրինագծերը:

Հոդված 35. Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը

Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունն արտացոլվում է համապատասխան տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում:

(IV-րդ գլուխը լրաց. 19.03.02 ՀՕ-316)

Գործնական աշխատանք

_ Երգ - «ման գառնուկ»

Ներկայացնել Աբ. Խնկոյանի «Գայլն ու գառը»։

Հեղ - Մի ամլիկ գառ
Իրեն համար
Ջուր էր խմում առվակից
Մեկ էլ դեմի ձորակից
Գայլն է կտրում վերևը
Խոսքին տալով էս ձևը.

Գայլ - Այս ի՞նչ լրբություն.
Ի՞նչ հանդգնություն.
Այ դու՛, փսլնքոտ
Ոչխարի լակոտ.
Ի՞նչ իրավունքով
Եկել ես դնչովդ
Բթով պնչովդ
Ջուրս պղտորե՞ս։
Բռնեմ դունչդ
Կտրի շունչդ։

Գառ - Մի բարկանա պարո՛ն գայլ
Քեզնից ցածր եմ քանի քայլ
Այնպես բան ես ասում որ...

Գայլ - Սու՞տ եմ ասում, այլ լղպոր
Էդ էլ չլնի հերվանը
Չեմ մոռացել էն բանը.
Որ հենց էստեղ, նույն օրը.
Անպատվեցիր իմ հորը
Մի տարեկան դեռ չկամ.
Եվ մի ծին եմ, մինուճար.
Դու կամ մեկն էր ձեր ցեղից
Էլ չշարժվես քո տեղից
Ձեր շների հովիվների

Ոխը քեզնից ես հանեմ
Տե՛ս գլուխդ ինչ բերեմ։
Ասավ, հասավ գառանը
Առավ, թռավ անտառը
Էստեղ ինչն է գլխավոր
Ուժեղի մոտ միշտ էլ
Թույլն է մեղավոր։

_Երեխաներ ինչու՞ գառնուկը տուժեց։

_Գառնուկը տուժեց, որովհետև չգիտեր իր Իրավունքները, իսկ մենք գիտենք, որ երեխաների իրավունքները կիրառվում են 0-18 տարեկան անձանց համար։

_1989 թվականին ՄԱԿ-ը հաստատել է կոնվենցիա երեխաների իրավունքների մասին։Երեխայի իրավունքների կոնվենցիան պարտադիր բնույթ ունեցող առաջին հիմնական միջազգային իրավական փաստաթուղթն է, որն իր մեջ ներառում է մինչև 18 տարեկան երեխաների իրավունքները, պարտականությունները համապատասխան հոդվածներով։
1996 թվականին Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է օրենք «Երեխայի իրավունքի մասին»։Հիշենք այդ օրենքներից մի քանիսը
_Երեխան ունի **անվան** իրավունք.
_ Ծիլ ու ծաղիկ ձայն տվեցին
Երգեց առվակը զվարթ,
Գարնան շնչով ավետեցին
Աշխարհ եկավ մի նոր մարդ
_ Թե աղջիկ է նորածինը,
Թող անվանեն Արմինե
Լիլիթ, Մարո, Աստղիկ, Սոնա
Կամ Տաթևիկ, Զարինե։
_ Թե տղա է նորածինը
Նրան կոչեք Սոս, Արսեն.
Արա, Սասուն, Վարդա, Տիգրան
Հայկ, Արտավազդ կամ Արմեն.
_Ճիշտ է յուրաքանչյուր մարդ ունի անվան իրավունք։Սակայն այդ իրավունքները խախտվում են մի շարք հեքիաթներում։Ասացեք խնդրեմ, որ հեքիաթի հերոսները անուններ չունեն։
_«Մոխրոտը», «Մատնաչափիկը», «Կարմիր գլխարկը», «Սպիտակաձյունիկը»
_Ճիշտ է, այս հեքիաթներում խախտվել է անվան իրավունքը, օրենքը, իսկ օրենքը խախտող անձինք ենթարկվում են պատասխանատվության օրենքի ողջ խստությամբ։
_ Ով էլ, որ լինես
Ինչ պաշտոն վարես
Լինես վարչապետ
Դատախազ, մարզպետ.
_ Թեկուզ տնօրեն
Լինես դպրոցի
Դու լավ իմացիր
Այս օրենքները։
_Պիտի խոնարհվես,
Քանզի դու պիտի
Կերտես, պաշտպանես
Ամեն մի մանկան
Ներկան, ապագան։
_Երեխան ունի մտքի, խղճի, ազատության իրավունք, կարծիք հայտնելու իրավունք։
_ Ով կարող է
Բռնանալ քեզ

Ճախրիր ազատ
Թռչունի պես։
_ Շատ հարցերում
Եղիր ազատ,
Կարծիք հայտնիր
Թարմ, անկաշկանդ։
_ Եթե ճիշտ ես
Վիճիր կրքոտ
Ծնողներիդ
Մեծերիդ մոտ։
_ _ Ճիշտ խորհրդին
Ականջ արա
Ու դու կյանքում
Չես ափսոսա։
_Ծնողները և պետությունը պարտավոր են հնարավոր պայմաններ ստեղծել երեխայի ապրելու և զարգանալու համար։
_ Ցորենը, թե ծիլ է տվել
Ամառը հասկ պիտի դառնա։
Թե պտուղ է ծառը տվել.
Պիտի աշնանը քաղցրանա
Եթե ծնվել է երեխան
Պիտի ապրի ու մեծանա։
_Յուրաքանչյուր մարդ, երեխա ունի քաղաքացիության իրավունք։
_ Ինչպես արևն ու իր շողը.
Ինչպես ծաղիկն ու իր ցողը.
Ինչպես հասկն ու իր ցողունը,
Ինչպես տանիքն ու իր սյունը
Դու էլ ձուլված ես ու անբաժան
Հայրենիքին քո սրբազան։
_ Հայրենի երկիր, դու հացի օրրան
Թող հավերժանան օրերդ գարնան
Իմ երազանքի միակ պահաստան
Քեզ եմ գովերգում անկախ Հայաստան։
Երգ - «Մանուկներն ենք ազգի»
_Երեխաներն ունեն հավասար իրավունքներ անկախ իրենց ազգությունից։
_ Լինես դու հայ կամ վրացի
Թե ապրում ես Հայաստանում
Ու կոչվում ես Հայաստանի քաղաքացի
Օրենքները նույն իրավունքն են խոստանում
Օրենքները ՝ շիտակ, արդար
Պաշտպանում են մեզ հավասար։
_Երեխայի կենսապայմանների ապահովման հարցում պատասխանատու են ծնողները և գինական ներկայացուցիչները։
_ Նկարեցի մի մեծ արև

Կապույտ երկինք
Կանաչ տերև
Հետո եղբայր,
Հետո քույրիկ
Մի լավ մայրիկ
Մի լավ հայրիկ
Այս ամենը ես կոչեցի
Մի մեծ ընտանիք

Երգ - «Մայրս, քույրս, փիառն, ես»

_Ընտանիքի անդամ երեխան ունի այդ ընտանիքում ապրելու իրավունք, ինչպես նաև ժառանգության իրավունք։

_ Դժբախտություն, թե պատահի
Ծնողներից դու զրկվես
Քո հայրական տունն, ամեն ինչ
Պատկանում է միայն քեզ։

_ Դու ես սյունը հայրենի տան,
Նրա ժառանգն իսկական
Եվ դու միշտ վառ պիտի պահես
Օջախը մեր հայկական։

_Ծնողական խնամքից զրկված երեխան ունի պետության պաշտպանության, խնամքի, դաստիարակության իրավունք։

_ Երկու որբեր
Քուր ու ախպեր
Կորած գնում են հեռու.
Արևը վառ, ճամփեն երկար,
Ո՛չ աղբյուր կա, ո՛չ առու։
Ասացեք խնդրեմ որ ստեղծագործությունից են այս խոսքերը։

_Այս խոսքերը «Գառնիկ ախպեր» ստեղծագործությունից են։

_Ու՞մից էին զրկված երեխաները։

_Երեխաները զրկված էին ծնողներից։

_Ո՞վ օգնեց նրանց

_Երեխաներին օգնեց թագավորը։

_Ու՞մ դերում հանդիսացավ խնամակալի դերում։

_ Դու հայրիկ չունես
Դու մայրիկ չունես
Բարի մարդիկ են
Որդեգրում քեզ։
Կամ մանկատանն ես
Դու առնում հասակ,
Դպրոց ես գնում,
Սիրում աշխատանք։

_Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու իրավունք։

_ Տասնվեցդ հենց լրանա,

Դու կաշխատես, ցանկանաս
Իսկ աշխատանք ինչքան ասես,
Ինքդ ընտրիր, որը կուզես։
_ Իր հատուկ գույնն ունի
Յուրաքանչյուր գործը,
Ահա մեր առջև է
Ճերմակ հացագործը։
Ճերմակ են հոնքերը
Մազերն ու քունքերը։
_ Մեկը մուրճով քար է տաշում
Տներ սարքում
Մյուսը շինում է լուսամուտ,
Որ այդ տունը չմնա մութ։
_ Մեկը սահմանն է հսկում
Զօր, գիշեր,
Որ հանգիստ ապրեն
Մանուկները մեր։
_ Դառնաս փաստաբան.
Կամ էլ ոստիկան
Դու պետք է լինես
Օրենքի պաշտպան։

Երգ - «Երբ մեծանամ»

_Երեխան ունի անվճար կրթություն ստանալու իրավունք
_ Մայրենի լեզվով
Դպրոցն անվճար
Դռներն է սիրով
Բացում քեզ համար։
_ Քո երազանքին
Դու միշտ կհասնես
Միայն, թե պիտի
Շատ լավ սովորես։
_Պետական մարմինները ապահովում երեխայի առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու հնարավորությունը։
_ Մարզվիր ամեն օր
Դարձիր առնացի
Մեր երկրի փոքրիկ
Նոր քաղաքացի։
_ Բայց, եթե հանկարծ
Դու հիվանդանաս
Երբեք չտխրես
Ու չխեղճանաս։
_ Բժիշկները քեզ
Կօգնեն անպատճառ
Բուժում կստանաս

Զրի, անվճար։

Երգ - «Մենք փոքրիկ մարզիկներ ենք»

_Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ է պահպանվում երեխայի իրավունքը և այն պաշտպանում են համապատասխան պետական մարմինները։

_ Քո պաշտպանն են
Ոստիկան ու դատարան
Նրանց դու միշտ ապավինիր անվարան։

_ Անտառների պես կանաչ,
Ու լեռների պես ուժգին,
Օրենքներն են մեր հայոց
Կանգնած միշտ ձեր թիկունքին։

_Հարցերով ամփոփել
Ի՞նչ իրավունքներ ունեն երեխաները։

Մեթոդիստի եզրակացություն

Դաստիարակը տիրապետելով <<Եթե խաղի իրավունքներ>>ի մասին կոնվերցիայի համառոտ բովանդակությանը երեխաներին մատուցեց այն մատչելի և ընկալելի։Նա դիմելով հեքիաաթի հերոսներին և պարզաբանելով նրանց վարքագիծը ավելի ընկալելի դարձրեց այն,որ երեխաները շրջապատված են հոգատարությամբ և պաշտպանված են։
Դաստիարակը խոսում է պարզ եքևէջներով և յուրաքանչյուր հոդված մեկնաբանելիս օգտվում էր դրամատիկ մեջբերումներից և թևավոր խոսքերից։

ԵԶՏԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պատպանությունն հանգել եմ այն եզրահանգման, որ երեխաների մեջ իրենց իրավունքների եւ ազատությունների մասին տարրական պատկերացումներ ձեւավորելու, այլ մարդկանց եւ նրանց իրավունքների նկատմամբ հարգանքն ու հանդուրժողականությունը զարգացնելու համար կարեւոր է ոչ միայն գիտելիքներ տալը, այլեւ պայմաններ ստեղծել դրանց գործնական կիրառման համար: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հստակ սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք, անուն, քաղաքացիություն, ընտանիք ում ապրելու եւ դաստիարակվելու, ծնողներին ճանաչելու իրավունք: Խնամքից եւ ուշադրությունից զրկված երեխան չունի նորմալ աճի եւ առողջ զարգացման երկրորդ հնարավորություն, ուստի պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել բոլոր մակարդակներում երեխաների պաշտպանության խնդրին: Կատարելով հետազոտություն նկատեցի, որ ծնողների մեծամասնությունը չի ուսումնասիրել երեխայի պաշտպանությանը վերաբեղ ոչ մի նյութ, շատ քչերն են հետաքրքված դրանով: Սաների պաշտպանության վրաբերյալ շխատանքը պետք է կատարել սիստմատիկ, աստիճանաբար հասնելով այմ բանին, որ բոլորը անկախ մասնագիտությունից տեեղյակ լինեն այս ամենի մասին: Մեր մանկապարտեզի մանկավարժները ակտիվ մասնակցելով քննարկմանը վեր հանեցին այս թեմայի կարեւորությունը, նշելով, որ այն մեզ համար առաջնային տեղ է զբաղեցնում: Սա կրելու է շարունական բնույթ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանդուրժողականության ուսուցում Դասղեկի ձեռնարկ ԵՐԵՎԱՆ-2008
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Ընդունված է Ազգային ժողովի կողմից 29 մայիսի 1996 թ.)
https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115
3. Երեխայի իրավունքներն ու պարտականությունները (Права и обязанности ребенка
https://www.oiguskantsler.ee/ru/права-и-обязанности-ребенка-2)
4. Երեխայի իրավունքներ. ինչո՞ւ են դրանք կարեւոր
(https://www.unicef.org/armenia/պատմություններ/երեխայի-իրավունքներ-ինչո՞ւ-են-դրանք-կարևոր
5. https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115
6. https://www.unicef.org/armenia/